«Հայաստանի Հանրապետություն», 20.10.2009 թ.

Երիտասարդներին դեպի գիտություն՝ պետական աջակցությամբ

Տնտեսության զարգացման, գիտելիքի վրա հիմնված եւ համաշխարհային շուկայում մրցունակ տնտեսության ստեղծման կարեւորագույն ռազմավարական գործոններից է գիտության առաջանցիկ զարգացումը եւ տեխնոլոգիական առաջընթացը, ինչի համար սկզբունքային նշանակություն ունի ոլորտը երիտասարդ բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելը։

1991—2008 թվականների ընթացքում գիտական ակտիվ գործունեությանը համապատասխանող 35—50 տարիքային միջակայքում մոտ երկու անգամ կրճատվել է գիտական աստիճան ունեցողների մասնաբաժինը։ 1991 թվականին այն կազմում էր ընդհանուրի 40%–ը, իսկ 2008–ին՝ 19%–ը։ Սոսկ շուկայական մեխանիզմները հնարավորություն չեն տալիս լուծելու երիտասարդ կադրերի ներգրավման ու ամրապնդման խնդիրը եւ չեն կարող ապահովել կադրերի արդյունավետ վերարտադրություն։ Խնդիրը հնարավոր է լուծել միայն պետական համակարգված ծրագրային քաղաքականության միջոցով։

Հայաստանում ներկայումս իրականացվում են գիտության երիտասարդացման քաղաքականության իրականացմանն ուղղված մի շարք միջոցառումներ։ Գիտության երիտասարդացման խնդիրը, որպես թիրախային կետ, ընդգրկված է գիտության ոլորտի զարգացման 10—ամյա ռազմավարական ծրագրում, որը մշակվել է ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից եւ ներկայացվել կառավարության քննարկմանը։ Բացի այդ, վերջին երկու տարիների ընթացքում գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ իրականացվող գիտաժողովների եւ ամառային դպրոցների կազմակերպական հայտերի ընտրության ժամանակ առաջնահերթությունը տրվել է այն միջոցառումներին, որոնցում բարձր է եղել երիտասարդ (մինչեւ 35 տարեկան) մասնակիցների թիվը։ Կոմիտեի կողմից խրախուսվել եւ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ապահովվել է երիտասարդ գիտնականների ու ասպիրանտների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին։

Միեւնույն ժամանակ, պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող թեմատիկ ծրագրերի 2008 թ. մրցույթի ժամանակ սահմանվել է երիտասարդ կատարողների մասնակցության նվազագույն սահմանը՝ այսինքն՝ պարտադիր պահանջ էր դրվել, որ ծրագրի

կատարողների առնվազն 25% —ը կազմեին ասպիրանտները եւ մագիստրոսները։ Սեպտեմբերին գիտության պետական կոմիտեի նախաձեռնությամբ, Գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի եւ ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների եւ մշակումների հիմնադրամի հետ համատեղ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր–2009»–ի շրջանակներում հայտարարվեց երիտասարդ գիտաշխատողների մրցույթ՝ բնական, ճշգրիտ եւ տեխնիկական գիտությունների բնագավառներում։

Գիտությունների մյուս բնագավառների համար եւս հայտարարվել է մրցույթ։ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր—2009»–ը նպատակ ունի նպաստել երիտասարդ հետազոտողների բարձր մակարդակի գիտական աշխատանքների իրականացմանը եւ նրանց ինտեգրմանը համաշխարհային գիտական հանրությանը՝ միջազգային գիտաժողովներին, սեմինարներին եւ աշխատանքային խորհրդակցություններին մասնակցելու միջոցով։ Բացի այդ, այս ծրագիրը հնարավորություն կտա երիտասարդներին ավելի շատ վստահել իրենց ուժերին, հասկանալ, որ մշտապես գտնվում են պետական աջակցության ներքո եւ ապագայի հանդեպ տրամադրվել ավելի լավատեսորեն։
Ծրագիրը հնարավորություն կտա երիտասարդներին ձեռք բերել նաեւ գիտության կառավարման փորձ, քանի որ ծրագրի արդյունքում, անհատական դրամաշնորհներից բացի, շնորհվելու են նաեւ խմբային դրամաշնորհներ։

Այս ծրագրի շրջանակներում մրցութային հիմունքներով ՀՀ գիտական եւ գիտատեխնիկական գործունեություն իրականացնող ՊՈԱԿ—ներում անհատական կամ խմբային հետազոտական աշխատանքներով զբաղվող մինչեւ 35 տարեկան գիտնականներին եւ հետազոտական գործունեությամբ զբաղվող երիտասարդ գիտնականների խմբերին աջակցելու նպատակով կհատկացվի 31 դրամաշնորհ։ Եվս 13 դրամաշնորհ նախատեսում է տրամադրել գիտության պետական կոմիտեն՝ գիտական կազմակերպությունների ասպիրանտներին եւ հետազոտական գործունեությամբ զբաղվող երիտասարդ հետազոտողների խմբերին։

Գիտության երիտասարդացման ծրագրի շրջանակներում նման մրցույթները կլինեն պարբերական՝ հետզհետե ընդլայնելով իրենց կազմակերպական թեմատիկան եւ տարածականությունը։

Գ. ԲԱԴԱԼՅԱՆ